



ԲԱԶՄԱՎԷՊ

ԺԶ ՏԱՐԻ, ԹԻԻ Զ.

1858

ՓԵՏՐՈՒԱՐ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

Ճինաց խելացի առածներ: (Տես Հտ. ԺԵ, երես 357)

Ի՞նչ դիւրին է, և ի՞նչ դժուարին է
 թագաւորելը: Գեշ թագաւոր մը հեշտ
 բան կը կարծէ իր երկրին հոգաբար-
 ձու թիւնը: Փառաւոր պալատներ կը
 կանգնէ, խորունկ խրամներ կը բանայ,
 հարստութիւն կը դիզէ. բաւական է
 իրեն՝ որ իր ամէն կամքին կը հնազան-
 դին, և իր վայելքն անպահաս է. ի՞նչ
 փոյթն է իրեն որ ժողովուրդը կը կրէ:
 Բայց ինչպիսի աշխատալի կեանք է լաւ
 թագաւորի մը կեանքը: Ար վախնայ
 իր ժողովուրդը հարստահարելէն. ա-
 նոր նեղութեանցը մասնակից կ'ըլլայ.
 հայր մըն է որ իր որդոց թշուառու-
 թիւններուն վրայ կ'արտասուէ: Բա-
 ըիք ընել կ'ուզէ, և չկրնար միշտ ճանչ-
 նալ զայն. կը փնտուէ ճշմարտութիւնն
 որ կը փախչի իրմէ: Երբ ժողովուրդը ալե-
 ծուփ ծուլ մը կը նմանի, և աս ծուլը
 ինքը պիտի խաղաղէ: Միշտ իրեն բռ-
 նած ճամբան կը պախարակեն, միշտ

իրեն ըրած ընտրութիւնները կը դարձ-
 վեն: Մէկու մը հետ ծածուկ կը խօսի.
 կասկածներու կ'երթան: Չեղբ զար-
 կած բաները յաջող գացին. բազմին
 արդիւնք կը սեպեն զանոնք: Գժբազ-
 գութեանց հանդիպեցաւ. զինքը միայն
 յանցաւոր կ'ամբաստանեն: Ի՞նչ որ ա-
 նաչառ է, անողորմ կ'ըսեն. թէ որ
 գլխած է, օրէնքը պատուել տալ չգի-
 տեր: Արջանկացընէ՛ զժողովուրդը.
 պալատականք կը տժգոհան վրան. —
 մեծերուն բարիք կ'ընէ. ժողովուրդը
 կը տրտնջայ: Ահաւասիկ այս է թա-
 գաւորաց վիճակը, որ այնչափ նախան-
 ձելի կը համարուի: Ահաւասիկ այս է
 այն երջանկութիւնն, որ անոնք կը
 վայելեն:

Սա թագաւորը կը կերակրէ զիմաս-
 տունս. բայց կը տեսնեմ որ կենդանի-
 ներ ալ կը կերակրէ: Բաւական չէ կե-
 րակրելն ու հասոյթ կապելը իմաստ-

նոյն . պէտք է սիրել զանիկայ , պատուել , և մանաւանդ ՚ի գործ զնել իր պատուէրները :

Սիրտ մը անարատ պահելու մի միայն միջոցն է չափ զնել իր փափաքներուն : Ըստ կերպով՝ առաքինութեան ճամբէն քիչ մը ատեն հեռանալու ալ ըլլաս նէ , դարձեալ շուտով կը մտնաս անոր մէջ :

Որչափ անգամ վայրկենական հաճոյքի մը համար այնչափ բան կը վատնեն մարդիկ , որով հարիւրաւոր թըշուառներ կրնային մահուրնէ խալըսել :

Պալատներ կը կանգնուին մէկ մարդու բնակութեանն համար միայն . աւելի աղէկ չէր ըլլար հասարակ շէնքեր շինել ու անոնց մէջ բնակեցընել այնչափ դժբաղդներն , որ պուխ զնելու տեղ չունին :

Ըշխատութենէ կը խորշի մարդ առաքինութեան հասնելու համար . բայց ո՞վ տեսնուած է որ բաղդին յաջողութիւններն արհամարհէ , որոնք նեղութեամբ ձեռք կը ձգուին :

Երբոր տէրութեան մը կառավարութիւնը քաղցր է , ժողովուրդը մահուրնէ կը վախնայ . որովհետեւ այնպիսի ատեն կեանքը զուարճալի է : Երբոր կառավարութիւնը չափազանց խստութիւն կը բանեցընէ , ալ մահուրնէ չը վախնար . որովհետեւ անտանելի կեանք է անցուցածը :

Ներութիւնը , հիւանդութիւնն ու մահը կենաց մեծագոյն թշուառութիւններն են : Հարստութիւնները ասոնց դարման մը չեն ըներ . մանաւանդ թէ՛ հարստութեամբ շատ անգամ աւելի շուտով կը ծերանայ մարդ , աւելի ստէպ կը հիւանդանայ , ու աւելի շուտ մահուան դուռը կը հասնի :

Շատ քիչ բան պէտք է սնանելու , բնակութեան ու զգեստի համար : Ընկէց աւելին ունենալու կը բաղձայ մարդ՝ ուրիշներուն ախորժակին համաձայնելու , կամ աչուրնին առնելու համար :

Բարկութեան կրից միջոցը բան մի գրեր : Եղուի հարուած մը շատ անգամ դաշոյնի մը հարուածէն աւելի վրտանգաւոր է . ինչ պիտի ըլլայ ուրեմն գրչի հարուած մը :

Տէրութեան պահպանութիւնը ժողովրդենէ կը կախուի : Ով թագաւոր , դու որ ժողովուրդը կը կեղեքես՝ որպէս զի զքեզ հարստացընես , կը նմանիս անմարդուն , որ իր մարմինը յօշ յօշ կը կտրէ՝ անով սնանելու համար . իրացընէ իրեն ստամոքսը կը լեցընէ , բայց մարմինը շուտով կը մեռնի :

Թագաւորի մը համար քան զմեծագին գանձս աւելի յարգի բան մը կայ . և այս է՝ իր հաւատարիմ ծառայից իմաստուն խորհուրդները , որ պետութեան պիտոյիցը վրայ կը տեղեկացընեն զինքը :

Ա Ռ Ա Կ

Պարկն :

()ը մ՝ Ըրամազդ հանեց հրաման
Որ կենդանիք գան ժողովուրին
Յոսս արքունի իւր բարձրութեան .
Եւ թէ կայ մէկը մէջերնին ,
Կըսէ , տըժգոհ կերպարանքէն ,
Թող համարձակ զրուցէ ինձի
Որ շուտով ճարն ըլլայ իրեն :
Ըռաջ եկուր դու նախ , կապիկ .